ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵՀՐԴԱԴ ԲՈՐԴԲԱՐ ԹԱՀԵՐԳՈՒՐԱԲԻ
ԵՎՐՈՊԱՅԻ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

ԻԴ. 03.02- «Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրություն» մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2013

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МЕХРДАД БОРДБАР ТАХЕРГУРАБИ
ВРЕМЕННО-ПРОСТРАНСТВЕННЫЕ ИЗМЕНЕНИЯ ГОСУДАРСТВЕННО-ПРАВОВОЙ СТРУКТУРЫ И ГРАНИЦ ЕВРОПЫ (ГЕОПОЛИТИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ)

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата географических наук по специальности 03.02- “Экономическая, социальная и политическая география”

ЕРЕВАН – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ աշխ.գիտ. թեկ.դոցենտ
Միտուշ Մարտինի Թորոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
աշխ.գիտ.դոկտոր,պրոֆեսոր Արամ Ռուստամի Ավագյան
աշխ.գիտ. թեկ. դոցենտ Էմմա Արտաշեսի Թումանյան
Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. մարտի 21-ին ժամը 14^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի Երկրագիտության 005 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0025, Երևան, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2014 թ. փետրվարի 21-ին:
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
Երկրաբանա.հանք.գիտ.թեկնածու, դոցենտ Մ.Ա.Գրիգորյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете
Научный руководитель кандидат геогр. наук, доцент
Митуш Мартинович Торосян

Официальные оппоненты:
докт.геогр.наук, профессор Арам Рустамович Авагян
канд. геогр. наук, доцент Емма Арташесовна Туманян
Ведущая организация: Армянский педагогический университет им. Х.Абовяна
Защита состоится 21 марта 2014 г.14^{30} часов на заседании Специализированного совета ВАК 005 “Науки о Земле” , действующего в ЕГУ Адресс: 0025, Ереван, ул. А.Манукян 1
С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.
Автореферат разослан 21 февраля 2014 г.
Учёный секретарь Специализированного совета
кандидат геолого-минералогических наук, доцент М.А.Григорян

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Աշխատանքի արդիականությունը Սառը պատերազմի ավարտից հետո, սոցիալիստական համակարգի փլուզման, աշխարհաքաղաքական գործընթացները նոր խնդիրներ դրեցին աշխարհի պետությունների առջև:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արևմուտքի և արևելքի շփման հիմնական խաղատախտակը մնում է Եվրոպան, հետևաբար ներկա ուսումնասիրությունների առանցքը կազմում է Եվրոպայի սահմանների, քաղաքական քարտեզի պետաիրավական և տնտեսական-քաղաքական կառույցների փոփոխությունների վերլուծությանը: Այդ բոլորը վկայությունն են այն բանի, որ կտրուկ մեծացել է աշխարհաքաղաքական ուսումնասիրությունների հասարակական արժեքը և նրան ներկայացվող սոցիալական պատվերի կարևորությունը:

Այդ առումով ներկա ատենախոսության ուսումնասիրության թեման՝ «Եվրոպայի պետաիրավական կառուցվածքի և սահմանների տարածաժամանակային փոփոխությունները, աշխարհաքաղաքական առումով խիստ արդիական են ոչ միայն Եվրոպայի, այլև աշխարհի մյուս տարածաշրջանների համար:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը:

Աշխատանքի ուսումնասիրությունների համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել 19-20-րդ դարերի աշխարհաքաղաքականությանը վերաբերող Ֆ.Ռատցելի, Մաքինդերի, Ռ.Չելենի, Կ.Հաուսհոֆերի, Ռ.Հարտշոնի, Հ.Քիսինջերի, Ս.Զոնսի, Ա.Մեխենի, Ֆ.Ռատցելի և ուրիշների հիմնարար աշխատությունները, հայտնի տեսաբան՝ պրոֆ. Ժան Գաթմենի աշխարհաքաղաքական «Այկոնոգրաֆիայի և Սիրկոշիլեն մոդելի» ինչպես նաև
միջազգային աշխարհաքաղաքական գիտաժողովների առաջ քաշված մեթոդական մոտեցումները:

Աշխատանքի նպատակը և խնդիրները

Աշխատանքի նպատակն է բացահայտել Եվրոպայի քաղաքական քարտեզի կառուցվածքը և սահմանների տնտեսական, քաղաքական կառույցների տարածաժամանակային փոփոխությունները: Դրված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

1. Տարածաժամանակային ասպեկտով վերլուծել տարածաշրջանի աշխարհաքաղաքական գործոնների փոփոխությունները,
2. Գնահատել ուսումնասիրվող տարածաշրջանի բնական պայմաններն ու ռեսուրսները աշխարհաքաղաքականության տեսանկյունից,
3. Վերլուծել.

ա/ Եվրոպայի պետաիրավական կառուցվածքի և սահմանների տարածաժամանակային փոփոխությունները, սկսած Վեստֆալյան համաձայնագրից մինչև սառը պատերազմի սկիզբը,

բ/ Գնահատել երկրորդ համաշխարհային պատերազմի և դրան հաջորդած «սառը» պատերազմի աշխարհաքաղաքական հետևանքները,

4. Բացահայտել սահմանների փոփոխության և նոր սահմանների առաջացման ազգային, մշակութային խնդիրները,
5. Գնահատել միջազգային քաղաքական, տնտեսական, ռազմական կառույցների աշխարհաքաղաքական գործոնները,
6. Տալ տարածաշրջանի պետությունների միավորման և բևեռացման աշխարհաքաղաքական գնահատականը,
7. Գնահատել միասնական Եվրոպայի սահմանների, դեպի Կովկաս և Միջին Արևելք ընդարձակման աշխարհաքաղաքական հնարավորությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Աշխատանքի հետազոտության օբյեկտ են համարվում Եվրոպա աշխարհամասի քաղաքական քարտեզը, պետահիրավական կառուցվածքը և նրա սահմանների տարածաժամանակային փոփոխությունը:

Հետազոտության առարկան՝ Եվրոպայի տնտեսական, քաղաքական սահմանների տարածաժամանակային փոփոխության վրա ազդող բնական, տնտեսական, տեխնիկական, ազգային, հոգևոր-մշակութային, սոցիալ-քաղաքական գործոնների ուսումնասիրությունն է, ինչպես նաև տարածաշրջանի սուբյեկտների համագործակցության (Եվրոխորհուրդ, Եվրոմիություն և այլն) գործընթացների գնահատումը:

Ակնհայտ է, որ մեր հետազոտության օբյեկտը ներկա ուսումնասիրության պարագայում Եվրոպայի հասարակական կյանքի քաղաքական ոլորտի տարածքային կազմակերպման արդյունք հանդիսացող պետահիրավական կառուցվածքի քաղաքական համակարգեր են՝ պետությունները, պետությունների խմբավորումները և համաեվրոպական ֆինանսական, տնտեսական կառուցվածքները: Այս պարագայում պետությունները դիտարկվում են ոչ թե քաղաքական կատեգորիա կամ սոցիալական ինստիտուտ, այլ քննարկվում են որպես հասարակության տարածքային կազմակերպման արդյունք, որը հետազոտության օբյեկտ է ներկա հետազոտության համար:

Աշխատանքի կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել.

1. Որպես քաղաքական աշխարհագրության, աշխարհաքաղաքականության դասընթացների լրացուցիչ հետազոտական նյութեր:
2. Ուսումնասիրության նյութերը օգտակար կլինեն արտաքին քաղաքականությամբ զբաղվող մասնագետների (պետական-քաղաքական գործիչների, աշխարհաքաղաքականության ոլորտի պետահիրավական կառուց-վածքի վերլուծաբանների և ընդհանրապես աշխարհաքաղաքակությունով հետաքրքրվողների) համար:
3. Աշխատանքի արդյունքները կարող են կիրառվել որպես մոտեցումների տարբերակ, տարբեր տարածաշրջանների աշխարհաքաղաքական վեճերի կարգավորման գործընթացներում:
4. Իրանի և Եվրոմիության տարածայնությունների մեղմելուն, բանակցութ-

յունների նոր փուլ սկսելու համար:

Աշխատանքի գիտական նորույթը

- Վերլուծվել են բնական և հասարակական աշխարհաքաղաքական գործոնները որպես աշխարհաքաղաքական բաղադրիչ:
- Առաջարկվել է աշխարհաքաղաքական սահմանների տարանջատման մոտեցումները և սկզբունքները, անջրպետող սահմաններից, կոնտակտային սահմանների անցման:
- Տարածաժամանակային վերլուծության է ենթարկվել Եվրոպայի պետաիրավական կառուցվածքի և սահմանների փոփոխությունները:
- Վերլուծվել է քաղաքական, տնտեսական, ֆինանսական և այլ կառույցների գործառույթները որպես ժամանակակից աշխարհաքաղաքական մոդել:
- Վերլուծվել է Մերձավոր և Միջին Արևելքի բարեփոխումների Եվրոմիության աշխարհաքաղաքականությունը:
- Կազմվել է Եվրոպայի տարածաժամանակային փոփոխության 5 քարտեզ:

Պաշտպանության հիմնական դրույթները.

1. Հիմնավորվել է աշխարհաքաղաքականությունը, որպես հասարակական աշխարհագրության բարդ համակարգի բաղկացուցիչ մաս, հետևաբար հանդիսանում է աշխարհաքաղաքականության ուսումնասիրության ոլորտ:
2. Որոշված և հիմնավորված են Եվրոպայի քաղաքական քարտեզի և սահմանների փոփոխման պատճառահետևանքային կապը:
3. Հիմնավորված են տարածաշրջանի սահմանների և քաղաքական քարտեզի ձևավորման տարածաժամանակային օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները:
4. Կանխատեսված է Եվրոպայի տնտեսական սահմանների ընդլայնումը Կովկաս, Մերձավոր և Միջին Արևելք:

Աշխատանքի արդյունքների տպագրումը և քննարկումները:

Աշխատանքի հիմնական դրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնների ընդլայնված նիստում:

Հրատարակվել են Լ.Վալեսյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55 ամյակին նվիրված «Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը» գիտաժողովի նյութերում, «Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտական հանդեսներում և Իրանի տարբեր ամսագրերում, «Կովկասը պատմության ընթացքում միջազգային համագումարի» հոդվածների ժողովածույում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, 26 ենթագլուխներից, եզրակացություններից, առաջարկություններից, գրականության ցանկից (159 անուն), հավելվածների բաժնից: Աշխատանքի ծավալը կազմում է 128 էջ, որտեղ տեղակայված են 3 աղյուսակ և 7 նկար, որից 6-ը քարտեզներ, 1-ը՝ գծապատկեր:

Աշխատանքի համառոտ բովանդակությունը

Ներածությունում հիմնավորվել է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակը, հետազոտման օբյեկտը և առարկան, աշխատանքի գիտական նորույթները, կիրառական նշանակությունը, բերված են ատենախոսության պաշտպանության հիմնական դրույթները:

Առաջին գլխում ներկայացված են ուսումնասիրման մեթոդաբանությունը, վերլուծվել է ուսումնասիրության տեսական և մեթոդական գրական աղբյուրները: Առաջին գլուխը բաղկացած է 6 ենթագլուխներից:

1.1 Գրական աղբյուրների համառոտ վերլուծությունը: Աշխատանքում օգտագործված գրական աղբյուրները փաստում են այն իրողությունը, որ տիրապետող գլոբալիզացման պայմաններում փոխվել են համաշխարհային աշխարհաքաղաքական գործընթացների մասշտաբներն ու արագությունը, որոնց ազդեցությունից չի կարող խուսափել և ոչ մի աշխարհաքաղաքական ուսումնասիրություն:

1.2 Աշխարհաքաղաքական երևույթների ուսումնասիրությունները աշխարհաքաղաքականության ձևավորումից մինչև մեր օրերը՝ «Գեոպոլիտիկան», որպես իմպերիալիստական շրջանի աշխարհաքաղաքական գիտություն ծնվեց և ձևավորվեց 1870-1945 թվականներին: Այդ շրջանում Ռատցելից մինչև Հավսհուֆեր աշխարհաքաղաքական մտածողության մեջ պարունակում էին.

- Ապրելու և բնակչության տեղավորվելու համար ձևավորել բավարար տարածքներ:
- Աշխարհագրական և միասնական մեծ տարածքների գոյություն, սահմանափակ սահմանների փոխարեն: Գերտերությունների իրավունքը բնական սահմանների նկատմամբ:

Ներկա ուսումնասիրություններում փորձ է արվել նաև օգտվել հանրահայտ աշխարհագրական քաղաքագետ Ժան Գոթմենի «Այկոնոգրաֆիա և Սիրկուլիշեն» մոդելից: Այս ամենը նկատի ունենալով աշխարհաքաղաքականության զարգացման պատմության գործընթացներում առանձնացնել է վայրէջքի, վերականգնման ու ծաղկման շրջաններ:

1.3 Նվիրված է աշխարհաքաղաքականության ուսումնասիրության հիմնական օրենքներին ու հասկացություններին

Աշխարհաքաղաքականությունը որպես հետազոտության գործիքներ օգտագործում է հիմնարար հասկացությունների սեփական զինանոց, որոնք ըստ էության պայմանավորում են գիտության այս ճյուղի բուն բովանդակությունը: Ներկա ուսումնասիրության համար նպատակահարմար է.

- պետության տարածքը, որը ընդարձակվում է ժողովրդի մշակույթի զարգացման հետ մեկտեղ,
- պետության տարածական աճ (նոր գաղափարների շնորհիվ),
- պետության ընդարձակում (փոքր պետությունների հաշվին),

Աշխատանքի հիմնարար հասկացությունները առաջին հերթին վերաբերում է աշխարհագրական տարածությանը և պետահիրավական կառուցվածքին, որն ըստ Ֆ.Ռատցելի աշխարհաքաղաքականության տարածքը բաղկացած է երեք ոլորտներից՝ երկրաթաղանթից (ցամաք), ջրոլորտից (ջուր) և մթնոլորտից (օդ):

Ցամաքը՝ որպես աշխարհաքաղաքական գործոն, առաջին հերթին արտահայտվում է պետության տարածական սահմաններով, նրա չափերով և կոնֆիգուրացիայով (նկ.1):

Ջրային միջավայրը՝ ջրային տարածքը որպես քաղաքականության մեջ աշխարհագրական գործոն, ձևավորում է պետության աշխարհաքաղաքական դիրքը՝ հաղորդելով նրան բարենպաստության, իսկ բացակայության դեպքում անբարենպաստ միջավայր:

Օդային տարածքը մարդկության կողմից յուրացվել է նախորդ երկու միջավայրերից հետո, սակայն այսօր վերջինս կարևորությունը տեխնիկայի զարգացմանը զուգընթաց աշխարհաքաղաքական գործոնների շարքում անշեղորեն աճում է:

1.4 «Սահման» հասկացությունը: Սահմանի գործոնները:

Սահմանը աշխարհաքաղաքական հասկացություն է, որն առաջանում է պետության տարածքային սեփականության չափը որոշելու և օտարների դիմաց դիմակայելու հարցերում:

Սահմանների նշանակությունը բավականին ինքնատիպ է մեկնաբանել Ֆ.Ռատցելը: Ըստ նրա՝ սահմանները պետության այն օրգաններն են, որոնք վկայում են պետություն-օրգանիզմի ուժեղությունը կամ թուլությունը: Սահմանների նշանակության մասին նույն կերպ է արտահայտվել նաև Կ. Հաուսոֆերը: Պայմանականորեն սահմանները բաժանում են.

1. Ըստ ձևաբանական հատկանիշների.

ա/ բնական սահման (լեռ, գետ և այլն), բ/ երկրաչափական սահմաններ (պայմանավորված կոորդինատներով):

2. Ըստ ծագումնաբանական հատկանիշների. ա/ պատմական, ձևավորվել են մինչև տարածքի յուրացումը, բ/ վրադիր, անցնում են նախապես յուրացված խիտ բնակեցված տարածքով (այսպիսին է Եվրոպայի պետությունների ճնշող մեծամասնության սահմանները),

գ/ ռելիկտային սահմաններ (ժառանգված սահմաններ): Այդպիսին է Գերմանիայի հողերի սահմանները:

3. Ըստ իրավական վիճակի. ա/ Միջազգային իրավունքի ճանաչված սահմաններ, պատկերում են աշխարհի քաղաքական քարտեզը: բ/ ֆիկտիվ, շինծու սահմաններ: Սահմանն ունի միջազգային ճանաչում, ամրագրված փաստաթղթերում, բայց գոյություն չունի իրականում (Վատիկան, Սան-Մարինո և այլն): գ/ Իրականում գոյություն ունեցող, բայց միջազգային իրավունքով չճանաչված սահմաններ (Մերձդնեստյան հանրապետության, ԼՂՀ, Աբխազիա և այլն):



Նկ. 1 Պետական տարածական սահմանները և ծևաչափությունը

4. Ըստ գործառությունների.

ա/ անջրպետ սահմաններ կամ «երկաթյա վարագույր», (Հայաստանի և Ադրբեջանի սահմանները և այլն),

բ/ կոնտակտային (շփման) սահմաններ կամ «բաց» (Եվրոմիության ներքին սահմանները),

գ/ Զտող սահմաններ մուտքի ու ելքի թույլտվություն տալիս են ոչ բոլոր ապրանքներին և առանձին անձանց:

Երկրի պետական սահմանները լինում են ցամաքային, ջրային և օդային: Ցամաքային սահմանները դրանք պետական տարածքը եզրավորող գծեր՝ են երկրի մակերեսի վրա: Օդայինը՝ (Միջազգային կոնվեկցիայի համաձայն) երկրի մակերեսին ուղղահայաց երևակայական հարթությունն է դեպի մթնոլորտ՝ 25 կմ բարձրությամբ: Ջրային սահմաններ՝ կղզի պետությունների համար ընդունված է կղզու ափագծից 200 մղոն, ծովափնյա երկրների համար ցամաքի ափագծից՝ 12 մղոն հեռավորության վրա:

1.5 Աշխարհաքաղաքական ներուժ հասկացությունը և աշխարհաքաղաքական գործընթացներ: Աշխարհաքաղաքական ներուժը միջազգային քաղաքականության անհրաժեշտ գործիք է, որպես բանաձևերի համակարգ և վերլուծության մեթոդ, որոնք թույլ են տալիս մշակել և կիրառել առավել արդյունավետ ռազմավարություն: Ըստ Սպիկմենի ամեն մի պետության աշխարհաքաղաքական հզորությունը և աշխարհաքաղաքական գործընթացները պետք է որոշվի հետևյալ չափանիշներով՝ տարածքի մակերևույթ, սահմանների բնույթ, բնակչության քանակ, օգտակար հանածոների առկայություն կամ բացակայություն, տնտեսական ու տեխնոլոգիական զարգացում, ֆինանսական հզորություն, էթնիկական միատարրություն, սոցիալական ինտեգրացման մակարդակ, քաղաքական կայունություն, ազգային ոգի:

Աշխարհաքաղաքական ներուժ մեջ մտնում է նաև «պետությունների ազգային անվտանգություն» հասկացութունը: Աշխարհաքաղաքական կարևոր հասկացություններից է նաև «պետահիրավական կառուցվածք», որոնք ներկայացնում են հասարակության պահանջների գիտակցումը քաղաքական լիդերների կողմից և դրանց արտացոլումը պետական քաղաքականության մեջ:

Աշխարհաքաղաքական գործընթացներ արտահայտում են քաղաքական ինստիտուտների միջև առկա աշխարհաքաղաքական հարաբերությունները: Աշխարհաքաղաքական գործընթացներում առաջին պլան է մղվում «պետությունների ներուժը» և «պետությունների ռազմական հզորություն» հասկացությունները:

1.6 Ուժերի հավասարակշռություն և զսպման քաղաքականություն

«Ուժերի հավասարակշռման-բալանս» հասկացությունը «իրենից ներկայացնում է մի կողմից նվաճողական ալիքների փոխազդեցության, իսկ մյուս կողմից՝ տարբեր մակարդակների համագործակցության արդյունք»: Ինչ վերաբերվում է «զսպման քաղաքականությանը», ապա այն իրենից ներկայացնում է

միջոցառումների մի համակարգ, որն միտված է կանխելու մի երկրի (երկրների խմբի) ուղղակի ագրեսիան մյուս երկրի (երկրների խմբի նկատմամբ): Ընդ որում, որպես զսպման քաղաքականության գլխավոր բաղադրիչ հաճախ օգտագործվում է հնարավոր հետևանքների ցուցադրությունը, որը կկիրառվի ագրեսոր պետության նկատմամբ: Զսպման քաղաքականությունը օգտագործվում է նաև արդեն սկսված ագրեսիայի հետևանքները նվազագույնի հասցնելու նպատակով:

Երկրորդ գլխում ներկայացված է աշխարհագրական և աշխարհաքաղաքական գործոնները որպես աշխարհաքաղաքականության տարածքային կազմակերպման գործընթացների առանցքային բաղադրիչի:

Հավաստի է այն գիտնականների կարծիքը, որ տարածքի աշխարհագրական դիրքը, կլիմայական ու եղանակային պայմանների ազդեցությունը գալիս է մարդկության պատմության խորքից:

Բնական գործոնների ազդեցությունը աշխարհաքաղաքականության վրա կապված է օգտագործման տեխնոլոգիական հնարավորություններով: Տեխնոլոգիաների ազդեցությունը աշխարհագրական հարցերում, համաշխարհային քննարկվող թեմաներից մեկն է:

2.1 Ենթագլխում քննարկվել են Եվրոպայի բնական և տնտեսական աշխարհաքաղաքական բնութագրիչները՝ աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմանները, լանդշաֆտային և ռեսուրսային գործոնները:

Աղյուսակ 1

Եվրոպայի նավթի և բնական գազի հավաստի պաշարները[1]

Տարածաշրջաններ, պետություններ	Նավթ		Բնական գազ	
	մլն տ	%	մլրդ խմ	%
Արևմտյան Եվրոպա	2272.8	1.600	4933.6	2.8
Այդ թվում				
Ավստրիա	11.4	0.008	23.0	0.013
Գերմանիա	37.4	0.026	240.3	0.138
Դանիա	250.2	0.177	118.7	0.068
Իտալիա	101.6	0.072	222.9	0.128
Մեծ Բրիտանիա	610.7	0.433	629.7	0.363
Նիդերլանդներ	7.7	0.005	1566.4	0.902
Նորվեգիա	1230.3	0.872	2116.1	1.219
Ֆրանսիա	20.5	0.014	14.5	0.008
Այլ	3.0	0.002	2.0	0.001
Կենտրոնական և Արևելյան Եվրոպա	283.5	0.200	453.4	0.26
Այդ թվում				
Լեհաստան	17.4	0.012	166.5	0.096
Ռումինիա	154.3	0.109	117.5	0.067
Աշխարհում	141063.2	100.0	173545.1	100.0

[1] Ըստ World Oilv 224 N8 p. 23

Եվրոպա աշխարհամասը զբաղեցնելով Եվրասիա մայրցամաքի արևմտյան «թերակղզային» մասը ունի նպաստավոր քաղաքաաշխարհագրական դիրք: Նպաստավոր է նաև կլիմայի և լանդշաֆտների ընձեռնած հնարավորությունները, ինչը չի կարելի ասել հանքային ռեսուրսներով ապահովվածության մասին (աղ. 1): Պատկերված է Եվրոպայի վառելիքային ռեսուրսներով ապահովվածությունը:

Աղյուսակից երևում է, որ Եվրոպայի նավթի պաշարները, աշխարհի պաշարների 2 %-ից քիչ է, իսկ բնական գազինը 3-4 % սահմաններում է:

Եվրոպան ապահովված չէ նաև մետաղային հումքով: Այս հանգամանքը իր բացասական ազդեցությունն է ունենում տարածաշրջանի աշխարհաքաղաքականության համար:Չնայած հանքային ռեսուրսների սակավությանը Եվրոպական աշխարհաքաղաքականությունը նպաստում է տարածաշրջանի տեխնոլոգիական և տնտեսական զարգացվածությունը (աղ. 2)

Աղյուսակ 2

Արևմտյան Եվրոպայի պետությունների համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)[1]

Պետություն		Մլրդ դոլար	Մեկ շնչի հաշվով դոլար	Ըստ տնտեսության ոլորտների (%)		
				արդյունաբերություն	գյուղատնտեսություն	Ոչ արտադրական ոլորտ
1	Անդորրա	1.3 (2000)	19000	-	-	-
2	Ավստրիա	245.3	30000	25.7	3.5	70.8
3	Բելգիա	299.1	29100	26.3	1.9	71.8
4	Գերմանիա	2271	27600	31.0	1.0	68.0
5	Դանիա	167.2	31100	22.1	2.0	75.9
6	Իսլանդիա	116.2	29600	46.0	5.0	49.0
7	Իռլանդիա	8.678	30900	26.6	9.2	64.2
8	Իսպանիա	885.5	22000	28.6	3.6	67.8
9	Իտալիա	1550	26700	28.9	2.2	68.9
10	Լիխտենշտեյն	0.825 (1999)	25000	40.0	-	-
11	Լյուքսեմբուրգ	25.01	55.100	16.6	0.5	82.9
12	Հունաստան	213.6	20000	22.0	6.7	71.3
13	Մալթա	7.08	17700	23.0	3.0	74.0
14	Մեծ Բրիտանիա	1666.0	27700	26.5	0.9	72.6
15	Մոնակո	0.87 (1999)	27000	-	-	-
16	Նիդերլանդներ	481.1	29500	24.5	2.4	73.1
17	Նորվեգիա	171.7	37800	36.2	2.5	61.3
18	Շվեդիա	238.3	26800	29.0	2.0	69.0
19	Շվեյցարիա	239.3	32700	34.0	1.5	64.5
20	Պորտուգալիա	181.8	18000	30.7	5.8	63.5

[1] Ըստ http:// wwwciagov/cia/publications/factbook/countryeistinghtml.

21	Սան Մարինո	0.94	34600	-		
22	Վատիկան	-	-	-	-	-
23	Ֆինլանդիա	142.2	27400	32.8	4.3	62.9
24	Ֆրանսիա	1661.0	27600	24.4	2.7	72.9
25	Ջիբլաթար	0.769 (2000)	27900 (2000)	-	-	-
26	Միջինը	10574.772	28367	28.5	3.1	68.4

2.2 ենթագլխում ներկայացված է տարածաշրջանի սպասարկման ոլորտը որպես աշխարհաքաղաքական գործոն: Մասնավորապես վերլուծվել է ֆինանսական, դրամական, բանկային, առևտրի, հանգստի և տուրիզմի ծառայությունները, որը իրականացվում է.

- Եվրոպական ազատ առևտրի հանձնաժողովի,
- եվրոպական տնտեսական տարածքային հանձնաժողովի,
- Կենտրոնական Եվրոպայի առևտրային համագործակցության,
- Դրամական միավորի և կենտրոնական բանկային միության,
- Շենգենյան համաձայնագիր, համաեվրոպական այլ պայմանագրերի և համաձայնագրերի միջոցով:

2.3 ենթագլխում քննարկվել է Եվրոպական ժողովուրդների ազգային ինքնությունը որպես աշխարհաքաղաքական գործոն:

Քաղաքացիական իրավունքների առաջխաղացումը և զարգացումը մեծ դեր են ունեցել Եվրոպայի ինքնության հաստատման և ձևավորման գործում: Գոյություն ունեն նմանություններ ազգային ինքնության ստեղծման և Եվրոպական ինքնության ստեղծման միջև: Եվրոպայի ինքնության ստեղծման գործիքներն են՝ ուսուցման ընդհանուր և միասնական չափորոշիչներ, սովորողների փոխանակումներ և այլն: Եվրոպացիների ինքնության մյուս հատկություններից են բնակչության շարժունակ լինելը: Չնայած ինքնության բնագավառում ձեռք բերված հաջողություններին Եվրոպայում եղած խնդիրների հիմնական պատճառը դեռևս մնում է ընդհանուր և միասնական ինքնության բացակայությունն է, որը մոտ ապագայում վերացման ենթակա չէ: Ազգային ինքնության անհամաձայնությունները խոչընդոտում են Եվրոպական օրենքների ընդունմանը:

2.4 ենթագլխում որպես աշխարհաքաղաքական գործոն քննարկվել է օրինականության, ազգային և կրոնի խնդրին:

1. Շատերը գտնում են, որ Եվրոպայի քաղաքացիների միջև եղած խնդիրների պատճառը Եվրոմիության ոչ դեմոկրատական հիմքերի վրա կառուցված լինելն է նաև այն, որ հասարակ քաղաքացին չի մասնակցում միության որոշումների կայացմանը և դրանով զբաղվում են միայն միության անդամ պետությունների վերնախավերը: Այստեղից էլ առաջանում է այն դժգոհությունը, որ Եվրոմիության ընդարձակումը շատերի կողմից դիտվում է որպես անդամ երկրների շահերից չբխող հանգամանք և համարում են օրինականության խախտում, առանց հան-

ության կարծիքը հաշվի առնելու կայացվել Եվրոմիության ընդլայնման որոշում:

2. Բացի օրինականության հարցից անդրադարձվել է կրոնի ունեցած ազդեցությանը աշխարհաքաղաքականության ձևավորման գործում: Այս հարցում ևս չկա տարածված կրոնների միջև ընդհանրություն: Չնայած որ եվրոմիության անդամ երկրները կողմնակից են կրոնի և պետության առանձնացմանը, սակայն մինչ այսօր կրոնական խնդիրները ազդում են աշխարհամասի աշխարհաքաղաքական համակարգերի վրա:

3. Եվրոպան բնակեցված է եղել անհիշելի ժամանակներից: Մեր օրերում Եվրոպան ունի բավականին խայտաբղետ լեզվական և ազգային կազմ:

Եվրոպայի բնակչությունը կազմում է 700 միլիոն, որից 394.5 մլն ապրում է Արևմտյան Եվրոպայում: Եվրոպան ամենախիտ բնակեցված աշխարհամասն է, ԱՄՆ-ի միջին խտությունը գերազանցում է մոտ 5 անգամ: Արևմտյան Եվրոպայի առանձին երկրներում բնակչության խտությունը հասնում է 300 մարդ/քկմ:

Բարձր է Եվրոպայի ուրբանիզացիայի մակարդակը, բնակչության 75 % ապրում է քաղաքներում: Եվրոպան կարելի է համարել երկարակյացների աշխարհամաս: Այստեղ կյանքի միջին տևողությունը 77,4-83.6 տարի է: Միաժամանակ աշխարհամասի բնակչության աճը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո խիստ նվազել է և Գերմանիայում 1,99 ‰, Ֆրանսիայում՝ 3.28 ‰, Իտալիայում՝ 1,16 ‰: Այժմ ամենաշատ բնակչության աճը ապահովում են արևելյան Եվրոպայի երկրները և Ալբանիան:

2.5 Ենթագլխում հանգամանալի վերլուծվել է ժամանակակից աշխարհաքաղաքականության գործընթացներում որոշիչ դեր ունեցող մշակութային գործոնը: Վերջին տարիներին մշակույթի գործառույթները ենթարկվել են բազմաթիվ փոփոխությունների, մեծացել է նրա դերը և կիրառման ոլորտները: Մշակույթը օգտագործվում է որպես կյանքի որակի գնահատման ցուցանիշ: Մշակույթի հիմքեր է ստեղծվում ֆինանսական ներդրումների համար: Եվրոպական մշակույթը մեկ շարքում չի կարելի դասել, քանի որ մշակույթը բաղկացած է տարբեր ապրելակերպերից, ժողովրդական արժեքներից, պատմություններից և լեզուներից: Եվրոպական մշակույթը հենց այս պատճառով աշխարհաքաղաքական խնդիրների առջև է կանգնում:

Եվրոպայում գոյություն չունի ընդհանուր մշակութային աշխարհաքաղաքականություն և համընդհանուր ազգային մշակութային քաղաքականության մասին խոսք լինել չի կարող: Յուրաքանչյուր երկիր ունի իրեն հատուկ մշակութային քաղաքականություն, տեսակետներ, մասնագետներ, կառույցներ և մշակութային տեղեկատվական համակարգեր: Որպեսզի ստեղծվի Եվրոպական մշակույթ, նախ և առաջ տարբեր մշակույթներ պետք է կարողանան ապրել և գոյատևել իրար դիմաց և իրար կողքի: Մշակութային թույլ օղակները, փոքրամասնությունների ծայրամասային երկրների մշակույթները և հանրության կողմից լքված ազգային մշակույթները պետք է ասպարեզ վերադարձվեն, որպեսզի աշխարհաքաղա-

քականության համար բացվեն նոր դռներ:

2.6 Ենթագլխում քննարկվել է մշակութային տեղեկատվական տեխնոլոգիաների գործոնը: Եվրոպայում մշակութային առումով հաջորդ խնդիրը դա տեղեկատվական տեխնոլոգիաների մասսայականացման խնդիրն է: Տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են շատ նպաստավոր դեր ունենալ աշխարհաքաղաքականության տարբեր ոլորտներում, թե մշակույթի տարածման, պահպանության և թե արվեստի ճյուղերի ուսուցման առաջընթացի հարցում:

Երրորդ գլխում վերլուծվում է Եվրոպայի պետաիրավական կառուցվածքը և քաղաքական քարտեզի սահմանների փոփոխությունները 17-րդ դարի կեսերից մինչև մեր օրերը: Այս գլուխը բաղկացած է 8 ենթագլուխներից:

Եվրոպայի քաղաքական քարտեզը ըստ էության ձևավորվել է կապիտալիզմի անցման շրջանում՝ Գերմանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի միջև եղած երբեմնի տարաձայնությունների, աշխարհաքաղաքական տարբեր փոփոխությունների գործընթացների արդյունքում: Չնայած դրան 20-րդ դարի 60-ական թվականներից սկսած պետությունների ամբիցիաներն ու հավակնությունները իրենց տեղը զիջել են Եվրոպայի միասնությանը:

Եվրոպայի քաղաքական քարտեզի ձևավորման, կոնսոլիդացման ժամանակաշրջանում առանձնացվում է 5 փուլ: Այդ ընթացքում փոփոխվել է ոչ միայն Եվրոպայի, այլև աշխարհի քաղաքական քարտեզը:

Այդ փոփոխությունները ներառում են. 1. 1648 թ. Վեստֆալի համաձայնագիրը, 2. 1815 թ. Վիեննայի կոնգրեսի որոշումները, 3. 1919 թ. Վերսալի հաշտության պայմանագիրը, 4. 1945 թ. Պոտսդամի պայմանագիրը՝ Գերմանիայի մասնատումը և ՄԱԿ-ի որոշումների ընդունումը, 5. 1991 թ. մինչև մեր օրերը՝ սոցիալիստական համակարգի երկրների պետաիրավական կառուցվածքի փլուզումը և Արևելյան Եվրոպայի պետաիրավական կառուցվածքի փոփոխությունները:

3.1 Եվրոպայի պետաիրավական համակարգի և սահմանների փոփոխությունների վերլուծությունն է մինչև սառը պատերազմի սկիզբը: Եվրոպայի քաղաքական քարտեզում պետաիրավական համակարգի փոփոխություններ տեղի ունեցավ երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո: Դաշնակից պետությունները առանց որևէ բանակցությունների ու քննարկումների հսկողության տակ առան իրենց օկուպացրած տարածքը: Գերմանիան մասնատվեց 4 օկուպացիոն գոտիների: Գերմանիայի անմիջական մաս կազմող Արևելյան Պրուսիան կցվեց Ռուսաստանին և հետագայում ձևավորեց Կալինինգրադի մարզը: ԽՍՀՄ-ը Ուկրաինային, միացվեց արևմտյան Ուկրաինան, Բելոռուսին՝ արևմտյան Բելոռուսիան, Կլայպետան և Վիլնոն անցավ Լիտվային:

Լեհաստանին վերադարձվեց Գերմանիայի արևելքը «յունկերական հողերը»: Այդ ամենը նպաստեց Եվրոպայի արևմտյան սահմանների փոփոխմանը և դրանով աճեց ԽՍՀՄ-ի դերը, ինչը շատ անցանկալի էր արևմուտքի համար: Այդ աշխարհաքաղաքականությունը ուղղված էր ԽՍՀՄ-ի արևմտյան սահմաններում անվտան-

գության գոտու ստեղծմանը:

ԱՄՆ-ն, Ֆրանսիան, Անգլիան իրենց օկուպացրած գոտիներում (յուրաքանչյուրն իր նախաձեռնությամբ) կատարեցին պետաիրավական կառուցվածքային փոփոխություններ՝ կապիտալիստական ուղղվածություն: ԽՍՀՄ-ի օկուպացրած արևելյան գոտում ստեղծվեց ստալինյան մոդելի սոցիալիզմ:

Այսպիսով, մինչև սառը պատերազմի քաղաքական, ռազմական, տնտեսական ծրագրերի մշակումը Եվրոպան բաժանվել էր 2 հակադիր գաղափարական, ռազմական, տնտեսական ճամբարների:

3.2 Ենթագլխում վերլուծվել է Արևմտյան և Արևելյան Եվրոպական երկրների խմբավորումների աշխարհաքաղաքականությունը:

1947 թ. 12 երկրներ՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Դանիան, Նորվեգիան, Նիդերլանդները, Լյուքսեմբուրգը, Պորտուգալիան, Իսլանդիան, ԱՄՆ-ն և Կանադան Վաշինգտոնում ստորագրեցին Հյուսիս-Ատլանտյան դաշինք (ՆԱՏՕ) ստեղծման պայմանագիրը: Որպես ՆԱՏՕ-ի հակաուժ 1955 թ. Ալբանիան, Բուլղարիան, ԳԴՀ-ն, Լեհաստանը, Հունգարիան, Ռումինիան, Չեխոսլովակիան ԽՍՀՄ-ի գլխավորությամբ ստորագրեցին Վարշավայի պայմանագիրը (ՎՊ): Այսպիսով, ավարտվեց աշխարհի բաժանումը երկու հակադիր բևեռների :

3.3 Ենթագլխում բացահայտվել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջացած դառը իրականությունը՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի նկրտումները աշխարհաքաղաքական գերիշխանություն հաստատելու համար:

ԽՍՀՄ ոտնձգությունների վտանգից խուսափելու համար արևմտյան երկրները դիմեցին ԱՄՆ օգնությանը՝ միաժամանակ երբեք չհրաժարվելով միասնական Եվրոպա ստեղծելու գաղափարից՝ և մշակեց գործընթացների 5 փուլ:

Առաջին փուլում ստեղծվեցին «Բենլուքս»-ը, «Եվրոպայի տնտեսական համագործակցության հանձնաժողովը», «Եվրոպայի տնտեսական համագործակցությունների հանձնաժողովը», «Եվրոպայի համագործակցությունների կազմակերպությունը»: Դրանց գերնպատակն էր դիմակայել ԽՍՀՄ գաղափարախոսությանը: ***Երկրորդ փուլում*** ի տարբերություն առաջին որտեղ ԱՄՆ-ն ուներ աչքի ընկնող ազդեցություն և ձգտում էր իր տնտեսական, ռազմական և քաղաքական ազդեցությունը պարտադրել արևմտյան Եվրոպային, այս փուլում ԱՄՆ-ն նվազեցրեց մեծապետական ամբիցիաները: ***Երրորդ փուլում*** արևմտյան Եվրոպան Գերմանիայի գլխավորությամբ վերագտավ իր գեոպոլիտիկական կարողությունները: ***Չորրորդ փուլը*** սկսվեց 1973 թ. Անգլիայի, Դանիայի և Իռալնդիայի մասնակցությամբ և տևեց մինչև 1991 թ., այսինքն մինչև Մաստռիխտի դաշինքը: Այս փուլի ընթացքում կնքվեցին Եվրոպայի միասնականության միտված 4 պայմանագրեր:

1.«Եվրոպայի գումարային համակարգ»-ը, 2 «Եվրոպայի խորհրդարանի» ստեղծումը, 3.«Եվրոպայի ընդհանուր վկայական»-ի հաստատումը, 4.«Եվրոպայի դրամի միավորի օրենքը»:

Հինգերորդ փուլ, որը սկսվեց Մաստռիխտի դաշինքից հետո (1991 թ.) և շարունակվում է մինչ օրս: Այս փուլի բոլոր ջանքերը միտված էին վերացնելու միությանը խանգարող բոլոր խոչընդոտները և ընդլայնել Եվրոպայի աշխարհաքաղաքական տարածքը:

Աշխարհաքաղաքական տեսանկյունից, 5-րդ փուլում Եվրոպան անցնելով բազմաթիվ խոչընդոտների միջով կարողացավ, իր միասնական տարածքը («աշխարհի սիրտը») ընդլայնելով հասնել աշխարհում իր գեոստրատեգիական (աշխարհառազմավարական) դերը հաստատելուն:

Եվրոպայի միասնական աշխարհաքաղաքականության ձևավորման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկու գերտերությունների՝ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև ունեցած լարվածությունը հնարավորություն ընձեռեց Եվրոպայի պետությունների և որպեսզի ավելի արագ վերականգնեն տնտեսական վնասները և ստեղծեն իրենց աճի հիմքերը:

3.4 Ենթագլխում վերլուծվել է Բալկանյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական գործընթացները, ինքնիշխան պետությունների ձևավորումը և աշխարհաքաղաքական հետևանքները:

3.5 Ենթագլխում վերլուծվել է Եվրոպայի և Եվրոմիության միասնական սահմանների ձևավորման աշխարհաքաղաքականությունը: Կարելի է ասել այդ գաղափարը առաջացել էր դեռևս 20-րդ դարի 50-ական թվականներին Ֆրանսիայում: Գործնականում հիմնավորումը տվել են քաղաքական գործիչներ՝ Ժ.Մանտին և Ռոբեր Շումանը: Գաղափարի իրականացման կնքահայրը՝ Շ. Դե Գոլն է: 21-րդ դարի համաշխարհային փոփոխություններում մեծ է Եվրոմիության դերն և առանձնանում է երկու կարևոր հանգամանքով:

Առաջինն այն է, որ Եվրոմիությունը միայն միասնական շուկայով տնտեսական միություն չէ, այն տնտեսական, քաղաքական և ստրատեգիական (ռազմավարական) միասնության ուղղությամբ շարժվող միություն է: ***Երկրորդ՝*** միասնական Եվրոպան աշխարհաքաղաքականությամբ առանձնանում է ԱՄՆ-ից և իրականացնում է սեփական աշխարհաքաղաքականության լծակները, բացի տնտեսական միասնությունից ձգտում է հասնել նաև ռազմական և պաշտպանական միասնության:

3.6 Ենթագլխում վերլուծվել է Եվրոմիության կորպորացված աշխարհաքաղաքականությունը (սառը պատերազմի ավարտից և ԽՍՀՄ փլուզումից հետո), միջեվրոպական և միջազգային հարաբերություններում:

3.7 գլխում վերլուծված է եվրոպական աշխարհաքաղաքականության զարգացումները և ընդլայնումը:

Եվրամիության տեսաբանները այն կարծիքին են, որ Եվրոմիության աճի աշխարհաքաղաքականության «Եվրոպայի քաղաքացի» մոդելը կարող է նպաստել աշխարհում նման նոր մոդելների ստեղծման, ինչը կնպաստի խաղաղության և դեմոկրատիայի հաստատմանը:

Նկ. 2 Եվրոպայի քաղաքական քարտեզը 1815-1848 թթ.

3.8 Քննարկվում է Եվրոմիության ընդլայնման հարցը:

Վերջին տարիներին, Եվրոմիությունը ավելացրել է իր «ներխուժումը» դեպի արևելք: Բազում երկրների, որոնք մինչ այդ գտնվում են «բանտի ծողերի ետևում» ընդունեց և դեռ մտադիր է մոտ տարիներում նրանցից մի քանիսին ևս ընդունել իր շարքերը: ԽՍՀՄ փլուզումը, ի կատար ածեց «Հարտլանդի» արևելքից արևմուտք միասնական Եվրոպա ունենալու միտքը: Այս ընդլայնումը դեպի արևելք, շատ մեծ կարևորություն ունի, չնայած, որ Արևելյան Եվրոպայի տաս երկրների անդամակցությունը (նկ. 2):

Չորրորդ գլխում վերլուծվում է Կովկասի Մերձավոր և Միջին Արևելքի բարեփոխումների Եվրոմիության աշխարհաքաղաքականությունը: Այն բաղկացած է 3 ենթագլուխներից:

4.1 ենթագլխում քննարկվում է Եվրոպայի և ԱՄՆ-ի դերակատարումը Մերձավոր և Միջին Արևելքի աշխարհաքաղաքական բարեփոխումներում:

Սառը պատերազմի ավարտից հետո Եվրոպայի համար ստեղծվեցին նոր

հնարավորություններ՝ հենվելով պատմական ժառանգության, ավանդական կապերի և աշխարհագրական մերձավորության վրա, վերականգնելու իր երբեմնի ազդեցությունը Մերձավոր Արևելքում:

4.2 վերլուծվել է Միջին Արևելքի բարեփոխումների նախագիծը: Ի հակակշիռ ԱՄՆ-ի «Մեծ Մերձավոր Արևելք» նախագծի Եվրոմիությանը առաջադրել է Միջին Արևելքի ու Միջերկրական ծովի երկրների ստրատեգիական գործընկերության փուլային նախագիծը: Նրանում ներառված են մի շարք խնդիրներ, որոնք չկան ամերիկյան նախագծում:

Այդ խնդիրներից կարելի է առանձնացնել. 1.Տարածաշրջանի երկրների հետ գործընկերության շահերի շեշտադրումը, 2. Արաբաիսրայելական հակամարտության լուծման կարևորումը, 3. Յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունների և տարբերակիչ կողմերի ընդգծում.4. Ժողովրդավարության և մարդու իրավունքների կարևորումը.5. Տնտեսական և մշակութային հետամնացության և անգրագիտության դիտարկումը՝ 6. Ահաբեկչության, զանգվածային սպանության միջոցների, կազմակերպված հանցագործությունների և ապօրինի գաղթերի դեմ պայքարի կարևորումը. 7. Քաղաքացիական հասարակության զարգացման առավել շեշտադրում.

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Մերձավոր Արևելքի պետահիրավական սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանները նկատի են առնվում Եվրոմիության կողմից:

4.3 Ենթագլխում վերլուծվել է Եվրոմիության և Իրանի փոխհարաբերությունները:

Եվրոմիության արտաքին քաղաքականությունը ԻԻՀ հանդեպ վերջին տարիներին քաղաքական տարբեր գործոնների ազդեցության արդյունքում բազմաթիվ վայրիվերումներ է ունեցել: Դրանց հիմնական պատճառներն են. 1/ ԻԻՀ բնական ներուժի առավելություններն ու հնարավորությունները Եվրոմիության համար, 2/Իրան-ԱՄՆ թշնամական հարաբերությունները և դրա ազդեցությունը Իրան-Եվրոմիություն փոխհարաբերությունների վրա, 3/ Իրանի և Եվրոպական պետությունների տարակարծությունները արտաքին քաղաքականության մի շարք հարցերի շուրջ:

Ի տարբերություն ԱՄՆ-ի, որը փորձում է մեկուսացնել Իրանին, չնայած դրան Եվրոմիությունը մշտապես փորձում է տարբեր մակարդակներով համագործակցել և բանակցել Իրանի հետ:

Հինգերորդ գլխում վերլուծվում է Եվրոմիության անվտանգության ռազմավարությունը Հարավային Կովկասում: Այն բաղկացած է 3 ենթագլուխներից.

Կովկասյան տարածաշրջանի երկրների անկախացումից հետո Եվրոմիությունը փորձեց ընդլայնել իր հարաբերություններն այդ երկրների հետ: ԱՄՆ-ի համեմատությամբ Եվրոմիությունն ունենալով առավել ճշգրիտ ճանաչողություն տարածաշրջանի երկրների այն ընկալվում է որպես Եվրոպայի մասնիկը կամ նրա

անմիջական հարևանը, որի կարևորությունը հատկապես ընդգծվում է էներգակիրների և կոմունիկացիոն ուղիների պատճառով, որպես (Եվրոպայի և Ասիայի միջև կոմունիկացիոն միջանցքը):

Եվրոպացիների համոզմամբ, հնարավոր չէ ապահովել Եվրոպայի անվտանգությունը առանց Կովկասի անվտանգության, այդ իսկ պատճառով Եվրոմիությունը որոշակի քայլեր ու միջոցներ է իրականացնում Կովկասում իր ներկայությունը ընդլայնելու և իր ազդեցության դաշտը մեծացնելու ուղղությամբ, այդ նպատակին է ուղղված տարածաշրջանի երկրների ընդգրկումը Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդում, ինչպես նաև տարածաշրջանային կոնֆլիկտների կարգավորման գործընթացներում, այդ թվում Հայաստանի և Ադրբեյջանի միջև առկա Ղարաբաղյան հակամարտության խնդրում:

5.1 Վերլուծվում է հարավկովկասյան մարտահրավերները:

Չնայած Եվրոմիության ձեռնարկած մի շարք ծրագրերին, ինչպես օրինակ՝ ԱՊՀ երկրներին տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նախագիծը, Եվրոպա-Կովկաս-Կենտրոնական Ասիա կոմունիկացիոն միջանցքի (նավթի և գազի) փոխադրման նախագիծը, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման Մինսկի խմբի գործունեությունը Հարավային Օսեթիայի և Աբխազիայի կոնֆլիկտի լուծման աշխատանքները,

Եվրոպայի համար Կովկասի անվտանգության հարցերը մինչև հիմա հիմնականում դիտարկվել են էներգակիրների և կոմունիկացիոն ուղիների տեսանկյունից: Սակայն 2003 թ. Եվրոպայում և Հարավային Կովկասում տեղի ունեցած իրադարձությունները փոխեցին Եվրոմիության մոտեցումները Կովկասի խնդիրների նկատմամբ: «Վարդերի հեղափոխությունը» Վրաստանում և Ալիևների իշխանության գալը Ադրբեյջանում, թերևս, 90-ականներից հետո տարածաշրջանային ամենենակարևոր փոփոխությունները կարելի է համարել, որոնց գումարելով Հայաստանի՝ անորոշությունը Եվրոմիությանը անդամակցելու և Եվրասիական մաքսային ընկերակցության մշտական ձգտումը, կարևորեցին Եվրոմիության առավել ազդեցիկ ներկայությունը տարածաշրջանում:

Խորհրդային Միության փլուզումից հետո մինչև մեր օրերը Եվրոմիության հետաքրքրությունը Հարավային Կովկասի հանդեպ վերընթաց միտում է ունեցել, իսկ Կովկասի երեք հանրապետությունները ևս շահագրգռված են այս դաշինքին անդամակցելու և նրա քաղաքական, տնտեսական ու տեխնոլոգիական կարողունակություններից օգտվելու հեռանկարով:

Հայաստանը այդ գործընթացում շահագրգռված է Եվրոմիության քաղաքական և տնտեսական առավել ակտիվ ներկայությամբ, սակայն Եվրոմիությունը նկատի առնելով իր առաջնահերթությունները և առկա խոչընդոտները, հատկապես, Ռուսաստանի հետ ունեցած փոխհարաբերություններն իր ծրագրերն առաջ է տանում քայլ առ քայլ և փուլ առ փուլ:

5.2 ենթագլխում վերլուծվում է ԱՄՆ-ի աշխարհաքաղաքականությունը

Եվրոմիության հարևանությամբ գտնվող Անդրկովկասյան տարածաշրջանում

Խորհրդային Միության փլուզումից հետո Կովկասի գործընթացներում դերակատար գլխավոր երկրներից մեկը ԱՄՆ-ն է: ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո Միացյալ Նահանգները պաշտոնապես ճանաչեց Կովկասի նորակազմ երկրների անկախությունը և հովանավորեց նրանց անդամակցությունը արևմտյան մի շարք կառույցներում՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցություն կազմակերպությանը և ՆԱՏՕ-ի գործակցություն հանուն խաղաղության ծրագրում: Միացյալ Նահանգները Կովկասը հայտարարեց իր կենսական շահերի գոտի: Մյուս կողմից, Կովկասի հանրապետությունները գտնվելով «հարթ լանդ» տարածաշրջանում, ցանկանում են ընդլայնել իրենց շահերի շրջանակը և ինտեգրվել արևմտյան երկրների, հատկապես, ԱՄՆ-ի հետ փոխգործակցություններում: Միացյալ Նահանգները փորձեց Խորհրդային Միության փլուզումից հետո օգուտ քաղել տարածաշրջանում ստեղծված գերուժի «վակիումից» (բացակայությունից) և ամրացնել իր դիրքերը տրածաշրջանում՝ հանդես գալով որպես գլխավոր խաղացող և բարձրացնելով իր միահեծան գերակայությունը համաշխարհային մակարդակով:

- ԱՄՆ իշխանությունները ձգտում են ֆինանսական, տնտեսական, խողովակաշարի կառուցման և տարածաշրջանի երկրների ինտեգրման միջոցով ամրապնդել Կովկասի երկրների ինքնուրույնությունը և կրճատել Ռուսաստանի ազդեցության ու ներգործության դաշտը:
- Իրանի Իսլամական հանարապեության դեմ հակաքարոզչություն կատարելով բացասական լույսի տակ ներկայացնել Իրանը, փոխարենը տարածել արևմտյան ծրագրեր ու մոդելներ և այդպիսով կասեցնել Իրանի քաղաքական ու տնտեսական ներկայությունը և ազդեցությունը Կովկասում:

Հայաստանը այդ գործընթացում փորձում է ամեն կերպ ապահովել իր անվտանգությունը: Դա բխում է Հայաստանի աշխարհագրական և աշխարհաքաղաքական դիրքից, որը մի կողմից գտնվում է տարածաշրջանային երկու ուժերի միջև և մյուս կողմից կոնֆլիկտներ ունի իր արևելյան հարևանի հետ: Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ցանկացած սպառնալիք Հայաստանին ավելի է մոտեցնում Իրանին և Ռուսաստանին: Հայաստանը կարիք ունի Ռուսաստանի հովանավորությանը, և դրանով է բացատրվում Հայաստանի ռազմական լայն գործակցությունները Ռուսաստանի հետ: Հայաստանը աշխատում է օգտվելով Ռուսաստանի հետ իր սերտ գործընկերութունից և սփյուռքահայության հնարավորություններից ամբողջ աշխարհում պաշտպանել իր անվտանգությունը:

5.3 Վերլուծվում է Արևելյան գործընկերության աշխարհաքաղաքական մարտահրավերները Իրան- Հայաստան փոխհարաբերություններում

Հայաստանի և եվրոխորհրդի պաշտոնական փոխհարաբերությունների սկիզբը դրվեց 1996 թ.: 2006 թ. նոյեմբերին հնգամյա ժամկետով ընդունվեց հայ-եվրոպական համագործակցության փորձաշրջանը: 2007-ին ձևավորվեցին այդ

համագործակցության ինստիտուտներն ու կառույցները, որոնք երկու կողմերի միջև առավել գործնական և սերտ կապեր հաստատեցին իրավական և առևտրային ոլորտներում:

Եվրոմիության հետ համագործակցությունները դրական արդյունքներ են արձանագրել պետահիրավական ոլորտում և ընտրությունների վերահսկման հարցերում, սակայն 2008 թ. փետրվարի նախագահական ընտրություններին հաջորդած հետընտրական զարգացումները և արտակարգ իրավիճակի հայտարարումը որոշակի մտահոգություններ առաջացրին եվրոպական գործ-ընկերների մոտ: Եվրոմիությունը հատուկ ուշադրություն է դարձնում Հայաստա-նում տիրող կոռուպցիայի վերացման ու նաև ազատ և արդար ընտրությունների կայացման, նախընտրական ու հետընտրական գործընթացների թափանցի-կության, ժողովրդավարության և մարդու իրավունքների հարգման հարցերին:

Եվրոմիությունը 2007-2013 թթ. ազգային ցուցանիշ ծրագրի շրջանակում սահմանել է հետևյալ առաջնահերթությունները Հայաստանում.

1. Ժողովրդավարական ինստիտուտների կայացում:
2. Ինստիտուցիոնալ և կայուն բարեփոխումների իրականացում:
3. Աղքատության հաղթահարման ծրագերին աջակցություն:

Առաջնությունների իրացման համար մշակվել են հետևյալ դրույթները.

ա/ Եվրոպայի արևելյան հարևանության անվտանգության ստրատեգիայի դրույթներից մեկը Հարավային Կովկասի կայունությունն է և Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը:

բ/ Եվրոմիության ստրատեգիական հիմնական հետաքրքրություններից գլխավորը մեկը էներգակիրների ապահովումն է, որից սակայն զուրկ է Հայաստանը: Այս հարցը խիստ մտահոգում է Հայաստանի ղեկավարներին և նրանք փորձում են նոր ուղիներ, այլընտրանքներ և գազի մատակարարման այլ սկզբնաղբյուր փնտրել: Միջուկային էներգիայի օգտագործումը և Իրանից գազի խողովակաշարի կառուցումը այդ շարքից են: Չնայած այս քաղաքականությանը, Հայաստանի էներգակիրների ոլորտը դեռևս մնում է Ռուսաստանի հսկողության տակ: Հայաստանի քաղաքական, տնտեսական և անվտանգության հարցը սերտորեն շաղկապված է նրա աշխարհագրական դիրքով, հետևաբար Հայաս-տանի ապագա զարգացումը սերտորեն շաղկապված է հարևանների հետ փոխ-հարաբերությունները կարգավորելու, փակ սահմանները բացվելու և Ղարաբաղի խնդրի լուծման հետ, քանի որ այս հարցերը խոչընդոտում են Հայաստանի ներքին սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացմանը, հետաձգում է Հայաստանի ներգրավվածությունը տարածաշրջանային առևտրատնտեսական համագործակցություններում:

գ/ Աշխարհագրական անբարենպաստ դիրքի և դեպի ծով ելք չունենալու պատճառով Հայաստանին պարտադրվել է աշխարհաքաղաքական բարդ խնդիր: Հայաստանը ներկայումս միայն երկու ելք ունի դեպի ծով, առաջինը՝ դա

Վրաստանի միջոցով դեպի Սև ծովն է, երկրորդը Իրանի միջոցով՝ դեպի Հնդկական օվկիանոսը և ազատ ջրերը: Մյուս կողմից, ղարաբաղյան հակամարտության Հայաստան-Ադրբեյջան անհամաձայնությունների հարցում Իրանը պաշտոնապես հանդես է եկել անկողմնապահ դիրքորոշմամբ և նույնիսկ կողմերին առաջարկել իր միջնորդությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության, ընդհանրացմանհիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացությունների և առաջարկությունների.

Եզրակացություններ

1. Կենտրոնական Եվրոպան ըստ Մաքինդերի մոդելի համարվում է Հարտլանդ (աշխարհի սիրտ): Հարտլանդի ընդարձակումը եվրոմիության սահմաններում ձեռք է բերել սպիկմենյան «ծովային ուժ»: Միաժամանակ, 20-րդ դարի երկրորդ կեսին ստանալով զարգացման Ռիմլանդ հնարավորություններ վերածում է աշխարհաքաղաքական ինտեգրալ նոր կառուցվածքային «եվրոհամագործակցություն» մոդելի՝ որոշակի կապ ստեղծելով «Հարտլանդ-Ռիմլանդ» ինտեգրալ մոդելի և Հյուսիս-ատլանտյան բլոկի աշխարհագրական տարածման միջև:
2. Մինչև սառը պատերազմի սկիզբը աշխարհաքաղաքական տեսությունները չեն ներառել Եվրոպա աշխարհամասի բնական սահմանները: Այդ է պատճառը, որ Եվրոպայում աշխարհաքաղաքական հետազոտությունները խնդիր չեն ունեցել աշխարհամասի հյուսիսի, հարավի և արևմտյան սահմանների ընդլայնման հետ: Ինչը չի կարելի ասել արևելյան ցամաքային սահմանների մասին: Որոշ աշխարհաքաղաքագետներ Հարտլանդի արևելյան սահմանները հասցրել են մինչև Ուրալ, Մերձավոր և Միջին Արևելք:
3. Ռատցելյան կենսատարածքի ուսմունքը, աշխարհաքաղաքականության ներկա փուլում ինտերգրվում է գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիաների, մշակույթի, տնտեսության կառավարման ձևերի հետ: Հակառակ պարագայում ինտեգրումը սխալ պատկերացում կտա կենսատարածքի ներուժի մասին:
4. Էթնիկ-կրոնական հակամարտությունները աշխարհաքաղաքական առումով ակտիվ դրսևորման ընթացքի փուլում են, որպեսզի ստեղծվի Եվրոպական ընդհանուր մշակույթ աշխարհամասի տարբեր ժողովուրդների կրոնական, էթնիկ մշակույթը պետք է կարողանա ապրել և գոյատևել կողք-կողքի:
5. Եվրոպայի պետաիրավական կառուցվածքի և քաղաքական քարտեզի ձևավորման փոփոխություններում կարելի է առանձնացնել 5 փուլ.

   ա/ Վեստֆալյան համաձայնագրից մինչև Վիեննայի կոնգրես

   բ/ Վիեննայի կոնգրեսից մինչև Վերսալյան հաշտության

   գ/ Վերսալյան հաշտությունից մինչև Պոտսդամի կոնֆերանս

դ/ Պոտսդամի կոնֆերանսից մինչև սառը պատերազմի ավարտը
ե/Սառը պատերազմի ավարտից մինչև մեր օրերը:

6. Բեռլինի պատի փլուզումը ընդունված է համարել սառը պատերազմի ավարտ՝ Արևմուտքի և Արևելքի աշխարհաքաղաքական հակադրությունների վերացում: Իրականում Բեռլինի պատի փլուզումով սառը պատերազմը չի ավարտվել: Այն թևակոխել է նոր՝ ահաբեկչության փուլ:
7. Սառը պատերազմի աշխարհաքաղաքական ամենամեծ հետևանքը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական գերտերության վերածելն է: Սառը պատերազմի ավարտը արագացրեց սոցիալիստական համակարգի պետահիրավական կառուցվածքի փլուզմանը, Եվրոպայի քաղաքական քարտեզի և սահմանների փոփոխմանը, այդ գործընթացում փոխվեց աշխարհամասի լիդերի կարգավիճակը, ի օգուտ տնտեսապես առավել բարձր զարգացում ունեցող վերամիավորված Գերմանիայի:
8. Գիտատեխնիկական ներկա փուլում աշխարհաքաղաքական գործոններից բնական պայմանները կորցրել են վաղեմի հնարավորությունները: Ակտիվ դեր պահպանում են որակյալ մասնագետները և հանքահումքային ռեսուրսները:
9. Եվրոմիությունը այս սկզբունքներով աշխարհաքաղաքական նոր մոդել է մշակել՝ ֆինանսական ներդրումների միջոցով հսկողություն սահմանել «գործընկերների» նկատմամբ, միաժամանակ տիրապետել հարևան տարածաշրջանների էժան՝ բնական և որակյալ աշխատանքային ռեսուրսները:

Առաջարկություններ

- Եվրոմիության և հարակից տարածաշրջանների քաղաքական, տնտեսական, միջպետական աշխարհաքաղաքական վեճերը խաղաղ ճանապարհով կարգավորման, լարվածության նվազման ուղղված կուլտուրմշակութային լայնամասշտաբ միջոցառումների կազմակերպում:
- Եվրոմիության ձեռք բերած խաղաղ գոյակցության փորձը առաջին հերթին տարածել եվրոհարևանության տարածաշրջանային երկրների լարվածության թուլացման:
- Դե ֆակտո անկախացած պետությունների միջազգային ճանաչման գործընթացներում հստակեցնել ՄԱԿ-ի և Հելսինկյան ձևակերպումները՝ տարածքի անքաքտելիության և ազգերի ինքնորոշման երկընթերցությունը, առաջնություն տալով մարդու ազատության, հիմնարար օրենքների սկզբունքներին:
- Եվրոմիության և Իրանի հարաբերությունների հարցում նոր ուղիների որոնում Իրանի և Եվրոմիության կողմից բացթողումները վերականգնել Իրան-ԱՄՆ թշնամական հարաբերություններից, շտկել առևտրատնտեսական կապերի ընդլայնման հնարավորություն:

1. Ընդլայնել ԵՄ-ի և ԻԻՀ-ի առևտրատնտեսական կապերը, որի համար

անհրաժեշտ է .

- Իրանը ճանաչի Եվրոպական ֆինանսա-տնտեսական ինստիտուցիոնալ կառույցները,
- Եվրոպական ընկերությունների հետ իրանական ընկերությունների պաշտոնական հանդիպումների, կոնֆերանսների կազմակերպում,
- Եվրոպական տնտեսական խոշոր կազմակերպությունների ղեկավարության և դրանց գործընկերների հետ կորպորատիվ շփումների կազմակերպում, Իրան այցելելու հրավերների ընդլայնում,
- Եվրոպայի սահմանների ընդլայնման աշխարհաքաղաքական առաջնահերթության հարավկովկասյան տարածաշրջանում պետք է լինի, ոչ թե էներգակիրները և դրանց տեղափոխման ուղիների որոնումը, այլև տարածաշրջանի հակամարտությունների կարգավորման խաղաղ գործընթացներին աջակցելը:
- Ընդլայնել Իրան-Հայաստան աշխարհաքաղաքական փոխհարաբերությունները տնտեսության ու մշակութային տարբեր ոլորտներում:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են հետևյալ գիտական հոդվածները.

1. Մեհրդադ Բորդբար, Թորոսյան Մ., Պատմաաշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունը քաղաքական քարտեզի և պետական սահմանների ձևավորման վրա, Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը, Ե. 2011, էջ 60-68
2. Մեհրդադ Բորդբար, The Regions of Caucasus and Middie Asia in the context of Geopolitical Interests of Iran and China, ԵՊՀ հրատարակչություն, Ե.2011, էջ 307-316
3. Մեհրդադ Բորդբար, Թորոսյան Մ., Սառը պատերազմը և համաշխարհային աշխարհաքաղաքական փոփոխությունները, Կրթությունը և գիտությունը Արցախում, 3-4, 2011, , էջ 12-15
4. Մեհրդադ Բորդբար, Ալի Օմրանզադեհ RISHEHYABIE ELALE MONAZEHE DAR GHAFGHAZ, «Կովկասը պատմության ընթացքում» միջազգային համագումարի հոդվածների ժողովածու, Թեհրան, 2009 թ., էջ 203-204:
5. Բորդբար Մեհրդադ, NAGHSHE GHAFGHAZ VA GHAFGHAZIAN DAR JONBESHAYE SIASI VA BIDARI MELLI IRANIAN, «Կովկասը պատմության ընթացքում» միջազգային համագումարի հոդվածների ժողովածու, Թեհրան, 2009 թ., էջ 109-110:

МЕХРДАД БОРДБАР ТАХЕРГУРАБИ

РЕЗЮМЕ

ВРЕМЕННО-ПРОСТРАНСТВЕННЫЕ ИЗМЕНЕНИЯ ГОСУДАРСТВЕННО-ПРАВОВОЙ СТРУКТУРЫ И ГРАНИЦ ЕВРОПЫ (ГЕОПОЛИТИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ)

Целью работы является пробразование государственно-правовой структуры и границ политической карты Европы, тенденции Европы в направлении Кавказа, в Ближнего и Среднего Востока.

Для теоретического обоснования исследования анализированы работы классиков геополитики I – XX веков и геополитические процессы.

Четко представлен объект и предмет исследования. Особое внимание уделено геополитическим факторам и понятиям, в частности, классификации границ, геополитическому потенциалу и балансу сил.

Выявлены геополитические факторы сферы обслуживания (торговля, образование и др.), а также национальной идентичности, языковой, религиозной, социально-культурной, информационной технологии.

Были анализированы процессы консолидации политической карты Европы с середины 17-го века до наших дней.

В результате этих процессов выделены 5 этапов изменений государственно-правовой структуры и политической карты Европы:

- Начиная с Вестфальского Соглашения до Венского Конгресса
- Начиная с Венского Конгресса до Версальского Мира
- Начиная с Версальского Мира до Потсдамской Конференции
- Начиная с Потсдамской Конференции до конца холодной войны
- Начиная с конца холодной войны до наших дней

Ударение было поставлено на геополитические процессы после 2-й Мировой Войны, геополитические последствия холодной войны.

После холодной войны в процессе изменения государственно-правовой структуры политической карты и границ Европы важную роль имеют государства соцлагеря и получившие независимость после распада СССР. В результате этих процессов анализировано формирование самостоятельного государства Косово и корпоративная геополитика Евросоюза в направлении расширении Европы, создания единой Европы.

Для единой Европы почва была создана еще Маастрихтским Соглашением созданием статуса гражданина, которое получило практическое применение 1995г. В настоящее время жители 27 стран имеют этот статус, к нему стремятся также граждане Албании, Боснии и Герцеговины, Монтенегро, Сербии и других стран. Что касается Турции, то расширение границ Евросоюза в восток создало разногласия между Францией, Германией, Великобританией.

Несмотря на эти разногласия, Европа, в противовес программе “Большой Ближний Восток” США, разработала поэтапную программу стратегического партнерства стран Средней Азии и Южного Кавказа, которая устремлена к реформам этого региона. Механизм своей деятельности, Евросоюз осуществляет исходя из расположения и важности этого региона, обеспечения энергоносителей и вопросов безопасности.

В этой программе особое внимание уделено взаимоотношениям Евросоюз-Иран-Закавказье. В отношениях Евросоюза и Ирана за последние годы заметались спады и восхождения. Не естественный ход отношений, в первую очередьобусловлен вражескими отношениями США- ИРИ. Имеются разные мнения также вокруг вопросов внешней политики Иран-Евросоюз. Евросоюз в своей политике предпочитает дать предпочтение взаимоотношениям взамен изоляции и противостояния. В связи с давлением на ядерную программу Ирана имеется некоторое разочарование, но Евросоюз полностью не отказывается от мысли переговоров с Ираном.

В рамках стратегии безопасности расширения соседства Евросоюза анализированы южнокавказские вызовы, подходы к мирному урегулированию Карабахско-Азербайджанского конфликта, геополитические отношения Ирана с США, Евросоюзом и Арменией.

Будущее геополитическое развитие Армении непосредственно связано с ее геополитическим расположением, урегулированием отношений с соседями, открытием закрытых границ и урегулированием Карабахской проблемы, поскольку эти вопросы препятствуют внутреннему социально-экономическому и институциональному развитию Армении, отсрочивает вовлеченность Армении в региональном торгово-экономическом сотрудничестве.

MEHRDAD BORDBAR TAHERGOURABI

THE SPATIAL-TEMPORAL CHANGES OF EUROPES LEGAL STRUCTURE AND BORDERS (GEOGRAPHICAL INVESTIGATION)

SUMMARY

The aim of the work is to reveal dimensional temporal changes of legal structure of political map of Europe and its borders, trends of European Union towards Caucuses, the expansion of Middle East.

For justification of theoretical study, works of geopolitical classics and geopolitical processes from 1 up to 20the century had been analyzed.

Subject and object of research was cleared. Special attention was taken to the geopolitical factors and concepts, in particular, to the classification of borders, to the balance of geopolitical potential and force.

Technologies of service sector (trade, education, etc.), as well as national identity, linguistic, religious, socio – cultural, informational, as a geopolitical factor had been revealed.

Consolidation processes, from the middle of 17th century up to nowadays, of political map of Europe had been analyzed.

In the result of these processes have been distinguished 5 stages of the changes of European legal structure and political map:

- From the Vestfal agreement up to the Congress of Vienna,
- From the Congress of Vienna up to the reconciliation of Versal,
- From the reconciliation of Versal up to the conference of Potsdam,
- From the conference of Potsdam up to the end of Cold War,
- From the end of Cold War up to nowadays.

Had been focused on the geopolitical processes of that took place after the Second World War and on the geopolitical consequences of Cold War.

In the process of changes of political map of European legal structure and its borders after the Cold War, states which were independent in the collapse of socialist camp and Soviet Union had a great role. In the result of that processes, formation of autocratic state of Kosovo and corporative geopolitics of European Union have been analyzed, directed to the expansion of European Union and creation of Europe.

Land has been prepared for the united Europe still by the agreement of Mastoxt, in the creation of European citizen status, which acquired political application in 1995.

Nowadays citizens of 27 countries have that status, citizens of Albania, Bosnia and Herzegovina, Montegro, Serbia and fro other countries also seek to that. What refers to Turkey is that expansion of European Union borders to the east (Turkey), caused disagreements between France, Germany and Great Britain.

Despite of those disagreements, Europe, in contrast with the program of "Great Middle East" of USA, developed phased program of strategic partnership of Middle East and the countries of South Caucuses, which is focused on the reforms of that region. European Union implemented mechanism of his partnership depending on the position and importance of that region, on the importance of questions, such as insurance and security of energy.

In that program great attention had been taken into the relation between EU – Iran Transcaucasus. In the recent years many landings and risings had been in the relations between European Union and Iran. Non natural process of relations is primarily due to the hostile relations of USA – IRI. There are also gaps over some issues in foreign policy of European Union.

In his policy European Union preferred to continue preference of relations instead of resisting and insulation. Beginning from 2005, there is some disappointment in connection with using pressure on Iran's nuclear program, but European Union has not completely rejected the idea of negotiations with Iran.

Within the security strategic framework of enlargement of EU neighboring, South Caucuses challenges have been analyzed, peaceful settlement approaches Karabakh – Azerbaijan conflict, geopolitical relations of Iran with USA, European Union and Armenia.

Geopolitical further development of Armenia is closely connected with its geographical position, with the regulation of relations with neighbors, opening close borders and with the salvation of Karabakh problem, because these issues prevent inner social – economical and institutional development of Armenia, delay Armenian's involvement in the regional trade and economic cooperation.